ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում, Ավագ Սեղանի վրա, եպիսկոպոսական իր անդրանիկ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյանը և քարոզեց «Զգեաց Մովսէս զձեռն իւր յերկինս և եղև խաւար և մէգ և մութ ի վերայ ամենայն երկրին եգիպտացւոց» (Ելք, Ժ 22—23) բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվեց հոգեհանգիստ Մայր Աթոռի բարերար նորոգ հանգուցյալ Առաքել Ցաղրճյանի հոգու փրկության համար։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռից Բաքվի վրայով իր թեմը մեկնեց գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյանը։ Մինչև Բաքու սրբազանին ընկերակցում էր Ադրբեջանի հայոց առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը։

Երևանի օդանավակայանում սրբազանին ճանապարհեցին գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսը և հոգեշնորհ Տ. Եղիշե և Տ. Վահան վարդապետները։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, իր թեմը՝ Թբիլիսի մեկնեց գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը։ Կայարանում սրբազանին բարի ճանապարհ մաղթեցին հոգեշնորհ Տ. Մեսրոպ և Տ. Եղիշե վարդապետները։ Սրբազանին ընկերակցում էր Թբիլիսիի քահանա հայրերից արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Դանիելյանը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստում, հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը նշանակվեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ։

Դեկտեմբերի 22-ին, Մայր Աթոռի լուսաբարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետի հետ գնաց Լենինական և առաջնորդական փոխանորդին ներկայացրեց ժողովրդին։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղան։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում, երեկոյան ժամը 4-ին, բանախոսեց Ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասատու պր. Պարգև Շահբազյանը «Ռաֆայել Պատկանյանի արձակը» թեմայով։

Դասախոսությունը լավեց մեծ հետաքրքրությամբ։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կեայ» բնաբանով։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը «Որ բարձրացուցանէ զանձն խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի» բնաբանով։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում սկսվեցին կիսամյա բանավոր և գրավոր քննությունները, որոնք կտևեն մինչև դեկտեմբերի 30-ը, որից հետո ուսանողության կտրվի Ս. Ծննդյան տոների արձակուրդ։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը պատարագեց Մայր Տաճարում և քարոզեց գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը Հայ եկեղեցու ավագ տոների մասին։